

## ՓՈԽԱՌԱՆՈՒՄ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

\*\*\*

# Ա. ՄԻՒԽՈՅՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

\*\*\*

Այդ միւսօնոքնութիւնը կատարուել է մեր Եկեղեցւոյ պատմութեան ամենանշանաւոր օրերից մէկում, որով և առանձնապէս խորհրդաւոր նշանակութիւն է ստանում։ Ս. Դրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ կազմակերպուած Եկեղեցին շատ ծանր օրեր էր անցընում է. դարի սկզբին առաջին անգամ նորա մէջ մեծ պառակում էր յառաջացել և խոշոր հաստածներ նորանից բաժանուելու վրայ էին։ 80 տարի առաջ Բիւզանդական կայսրները, Քաղկեդոնի ժողովի ուսմունքը պաշտօնական դաւանութիւն դարձնելով իրենց պետութեան սահմաններում՝ շարունակ աշխատել էին նոյն դաւանութիւնն ընդունել տալ նաև այս ինքնուրոյն Եկեղեցական կազմակերպութեանը, որ ամուր պահելով նախնեաց հաստատած դաւանանքը՝ խորթացել էր կարծես քրիստոնեայ արևմուտքից և աւելի յօժարութեամբ էր հպատակում հեթանոս արևելեան պետութեանց։ բայց չէին յաջողել։ Նոցանից վերջինը սակայն, Մօրիկ՝ զօրեղ և իւր նպատակին համար միջոցների մէջ խարութիւն չդնող կայսրը, յոյսը կտրած ամբողջը միատեղ զրաւելուց և օգտուելով արևելքում իւր ժամանակաւորապէս ձեռք բերած մեծ ազդեցութիւնից և իշխանութիւնից, յաջողել էր Զ. դարի վերջում պառակատում ձգել այս Եկեղեցու մէջ և սպառնում էր մեծ մեծ հատուածներ իւել նորանից։ Ջատելու համար ընդհանրական հայրապետի իշխանութիւնն ու հեղինակութիւնը, իւր ձեռն անցած հայկական նահանգներում նա առանձին հակաթոռ կաթողիկոս էր հաստատել տուել Յովհան Աւանեցուն, օրինական Մովսէս Եղուարդեցի հայրապետին թողնելով միայն Պարսից իշխանութեան ներքոյ զանուող մասերը։ Ապա զրաւել էր Վրաց կաթողիկոս ինւրիոնին, և սա աւելի ու աւելի համարձակ կերպով տարածում էր Քաղկեդոնի ուսմունքը Վրաց Եկեղեցւոյ սահմաններում, որ մինչ այդ դաւանական, վարչական, ծիսական և այլ ամէն տեսակէններով Հայոց Եկեղեցու ենթակայ անրաժան կրտսեր քոյրն էր եղել։ Ազուանից Եկեղեցին ևս, որ նոյն յարաբերութեան մէջ էր Հայոց Եկեղեցու հետ, ժամանակաւորապէս, ինչ ինչ արտաքին հանգամանքների պատճառաւ՝ կտրել էր սորանից հոգեւոր հաղորդակցութիւնը և դարձեալ դէպի Քաղկեդոնականութեան հակամետութեան նշաններ էր ցոյց տալիս։ Այսպիսի պայմաններում, Մօրիկ կայսեր հետ զրեթէ միաժամանակ, վախճանել էր Մովսէս Եղուարդեցին և Հայրապետական Աթոռը մի քանի տարի թափուր էր մնացել, որ քիչ չէր նպաստել Եկեղեցական կազմի խախտուելուն, և ահա Պարսից պետութեան մէջ մեծ պատուի և իշխանութեան հասած հայ նախարարներից մէկը՝ Մմրատ Բաղրատունի Վրկանայ մարզպանը, ժողովում է նախնեաց աւանդին հաւատարիմ մնացած եպիսկոպոսներին և ազգի մեծամեծներին ու նոր կաթողիկոս ընտրել տալիս։ Երբ նորընտիր հայրապետ Աբրահամ Աղբաթանեցին օծումն ընդունեց և հայրենի հաւատայ սահմանում

հաւատարիմ մնալու զիր առաւ բղոր ներկայ եղող այն եպիսկոպոսներից և հոգեորականներից, որոնք առժամանակ ենթարկուել էին յունական տղթեցութեան, չլատուած, նղակոտոր եղած և նորից ի մի ձուլուած հօտի առաջնորդները կարիք զգացն իրենց միութեան ու խոր կնքել պատշաճագոյն հանդիսով, և նոցա խնդրանոօք նոր հայրապետոց Ս. Միւռոն օրհնեց՝ ոգեորիշ փառաւորութեամբ։ Այս հանդիսի նկարազորութեան մէջ՝ տառած Է՝ ա) որ Միւռոն կաթողիկոսի մահից յետոյ Միւռոն չէր օրհնուել, և Վրթանէս վարդապետի տեղապահութեան ժամանակ հանգուցեալ կաթողիկոսի օրհնած Միւռոնն էր բաժնուել եկեղեցիներին։ ուրեմն Միւռոն օրհնելը վերապահուած էր կաթողիկոսին, եպիսկոպոսները չէին օրհնում. բ) որ Ս. Միւռոն օրհնելուց յետոյ հայրապետը միւս օր բաժանեց բղոր ներկայ եղողներին, և նոքա ուրախ ուրախ ցրուեցին իրենց տեղերը. այստեղից հաւանական է երևում, որ Օձնեցու կանոնն էլ այնպէս պէտք է կարդալ, թէ հայրապետը Ս. Միւռոն օրհնում էր, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները տարին մի անգամ նորանից ստանում և գործադրում էին. գ) որ Վրթանէս տեղապահը պիղագործաց արուեստից համաձայն արդէն նախորօք պատրաստել էր օծութեան իւրաքանչ մնում էր ամբողջ զիշերը հսկում և պաշտօն կատարել և ամբողջ ցերեկն էլ բուն օրհնութեան խորհուրդի վերայ տքնել, մինչև զլուխ եկաւ ամէն ինչ- ուրեմն ըստ էականին Ս. Միւռոնը, գոնէ է. դարու սկզբին՝ նոյն կազմութիւնն ունէր և նոյն ձևով էր օրհնում ինչ որ այսօր։

իսկ մէջ յաշորդ գարերում արդէն ի՞նչ անվտանգինելի սրբութիւն էր  
Ս. Միւռունը հայ քրիստոնէի աշքում՝ դրան վկայ Փ. գարու մեծ օրններզակ  
Գրիգոր Նարեկացին, որ իւր յայտնի աղօթազրքի վերջին խօսքը նուրիել է  
և սրբալոյս իւրայն Միւռունիք երկարաշունչ օրննաբանութեան։ Ս. Գրքից վերց-  
րած քազմաթիւ վկայութիւններով և իւղի աշխարհօրէն զործածութեան օպատ-  
էտ կողմէերն օրինակ առնելով՝ որչափ և թարգմանօրէնա (Դիոնիսիոս Արիս-  
պագացուց), բայց դարձեալ իրեն յատուկ ճոխ պատկերաւորութեամբ նա մի  
առ մի նուրիազրում է սրբազն իւղով նկարազործման բազմազան արդինք-  
ներն անցեալում և քրիստոնէի անձի վերայ։ Այս զարմանահրաշ յուսոյ օրն-  
նութեան իւղը, Քրիստոսի անուամբ և Ս. Հոգևոյ չնորհոք կնքելով՝ զանազա-  
նատեսակ ազգերի բերում իրար է խառնում և զարձնում մի քրիստոսեան ժո-  
ղովուրդ, նոյն երկնաւոր Հօր հարազատ որդիներ։ Խնչպէս որ Հին Ռւխտի մէջ  
որոշուած էր զոհի իւղային մասերը կերակրի համար չզործածել, այլ աստուա-  
ծութեան նուրիել, իրեն ճենճեր զոհացողական, այսպէս և նոր Ռւխտի մէջ  
օրհնութեան իւղը հանդիսանում է իրեն զօրութիւն Տեառն մատչելի, որ մեր  
հոգուն ճանապարհ է տալիս գէպի երկնային կայանները վերանդրու և Արար-  
ջին ճօնուելու ինչպէս ճրագի իւղը լոյս է արտագրում և մեր շուրջը լուսա-  
ւորում, այնպէս և սրբալոյս Միւռունը հոգեր լուսաւորութեան միջնորդ է մեզ  
համար հայոն։

Թաշորդ ԺԱ. դարսում, Բաղրատունիաց թագաւորութեան կործանումից յետոյ, երբ Գետրոն Գետագարձ կաթուզիկոսը, որ դժբախարար շատ տիսուր

<sup>1</sup> Ուսումնական հանրակառապ. Պաբուրին Հայոց, Վաղարշապատ, 1881, էքտ. 67:

գեր է կատարել Անի մայրաքաղաքը Յունաց ձեռքը յանձնելու մէջ և դորա համար առժամանակ պատուի ու պարզեների արժանացել, Կ. Պոլիս կանչուեցաւ, — երկիւզ կրելով իրաւամբ, թէ մի դուցէ շմունքն իրեն այլս իւր հօտի մօտ վերադառնար, 400 դիտք Միւռոն երկաթէ ամաններով թաղում է զիշերը՝ Անուր-Ախուրեան զետի յատակում, Անի քաղաքի մօտ, որպէսզի Եսյների ձեռքը չընկնի: Այս զգուշութեան մի պատճառն այն կարող է լինել, որ թէպէս Գետադարձը իւր քրոջ որդի Խաչիկ Բ. իւր փոխանորդ հայրուպետ է կարգել, բայց վախենում էր, որ Յունաց բանութեան երեսից նա ևս չկարողանայ հայրապետական իշխանութիւն վարել ու Ս. Միւռոն օրնել, և Հայերը մասն առանց Միւռոնի, բայց պատմիչի ակնարկած միւս պատճառն էլ այն է երևի, որ Յոյները արհամարնում էին Հայերի Միւռոնը, իրեն նոցա դաւանական խտրութիւնը շեշտող մի զիքաւոր սրբութիւն, և եթէ ձեռք զգէին, կ'անարգէին, կամ ոչնչացնելով նեղ դրութեան մէջ կը դնէին հայերին: Այս հաստատում է նոյն Պետրոս կաթողիկոսի կեանքից մի ուրիշ դիպուած, որ երբ Տրապիզոն էր զնացել Վասիլ Բ. կայսեր հետ տեսակցելու համար և Աստուածայայտնութեան աօնին օրը հրաման սատցաւ կայսրից ամենայն չքով Զրօրհնեաց հանդէսը կատարել՝ Ս. Միւռոնը ջրի մէջ կաթեցրած ժամանակի, առաւած է<sup>1</sup>, լուսոյ ճառագայթների մի ցնցուղ փայլատակց չուրջը, որ տեսանելի էր ամբողջ բազմութեան: Այս դրոյցը յետոյ աւելի ճոխացրած պատճում են<sup>2</sup>, թէ ո՞չ միայն սաստիկ հուր ցոլաց՝ իրեն երկնային տպացոյց Հայոց Միւռոնի սրբութեան, որ Յոյները շընդունելով՝ կամենում էին նոցա Միւռոնով սրբուած ջուրը նորից օրնելու:

Նման մի կատարմամբ է անշուշտ, որ երբ Ժ. դարում, Ներոէս Շնորհալու օրով միութեան խնդիր ծագեց Յոյների և Հայերի մէջ, Յունաց Մանուէլ կայսեր կողմից Հայոց կաթողիկոսին եղած 9 առաջարկներից մէկն այն էր, որ Հայերը Ս. Միւռոնը ծառերի պաղից եղած ձիթով պատրաստէին: Ինչպէս ժամանակակից մեր Եկեղեցւոյ հայերը բացատրում են, Հայաստանում ձիթենու իւր գժուարութեամբ նարելը միայն պատճառ կարող է եղած լինել, որ նախընթաց իրավայոյց ժամանակներում շատ անդամ՝ հաստրակ ձէթ է զործածուել, թէ չէ առվորականը և անպայման ընդունելին նաև Հայոց համար եղել է միշտ ձիթենու իւրը: Այսպէս, երբ 1441 թուին Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին փոխադրուեց<sup>3</sup> այդ մեծ մեռնարկութեան զիքաւոր հեղինակներից մէկը, Թովմա Մեծոփեցի վարդապէտ արք, Կիլիկիայում զործ ադրուած զեղծումների թռում, որն ոք պատճառ եղան Աթոռի փոխադրութեան, միշում է մինչ իսկ, որ Աստուածագործակ Միւռոնի փոխարէն հառարակ ձիթապառուղի ձէթ էին զործածում այնաեղէ<sup>4</sup>, այսինքն Հայոց Եկեղեցւոյ կանոնի համեմուտ նոյն ձէթը անուշանուա խունկերով և ժարկունքով չեին համեմուտ Խնչուէս ուրիշ Եկեղեցական կարգեր, որ նախորդ գարերուած Աթոռի առտանդական և տար ազդե-

<sup>1</sup> Մատթեոս Ռուհայեցի, Ժամանակագրութիւն, Վաշարշապատ, 1898, եղեա 104:

<sup>2</sup> Արիստոկէս Վ. Լատուկլեացի, Պատմութիւն, Վենետիկ, 1901, եղեա 12:

<sup>3</sup> Ուռայեցի, երես 50:

<sup>4</sup> Թովմա Մեծոփեցու Ցիառակարանը, Թիֆլիս, 1892, եղեա 56:

ցութեան ներքոյ լինելով՝ մասամբ խանդառուել էին, և Ս. էջմիածին փոխագործելուց յետոյ նախնեաց աւանդութեան համեմատ զերահաստատութեան, և ապա անփոփոխ շարունակուեցին մինչև մեր օրերը, այդպէս է և Ս. Միւռոնի օրնութեան կարգը՝ ձիթենու իւղով և անուշահնու իւղերի, խունկերի և ծաղկեաց նութերի համեմունքով պատրաստելու հսամենի սովորութիւնը։ Մեծոփեցին մի շարք տեսլիներ պատմելով, որոնք իրեն գուշակութիւն էին նկատում Ս. էջմիածնի հրաշալի նորոգութեան համար, յիշում է նաև մի բարեպաշտ հայի իրեն պատմած երազը, թէ ինչպէս տեսել է իրեն Ս. էջմիածնի բեմի վրայ նստած, զողը վարդով լիքը, և ամէն կովմից հայեր գալիս այդ վարդից զերցնում էին. ապա ինքն էլ իսկոյն մեկնում է, թէ Ս. Միւռոնն է այդ, որ Ս. էջմիածնից պիտի տարածուէր մէջն տեղ<sup>1</sup>, Յիրաւի, երբ Հայոց աղղի այս մեծերսխտ վարդապետն իւր ընկերների հետ այնպէս զարմանալի կերպով յաջուղեց Աթոռը Ս. էջմիածնում հաստատել և նոր հայրապետ ընտրել ու օծել կիրակոս Վիրապեցուն, նոցա կարեւորագոյն հոգսերից մէկը եղաւ Հոգեգալստեան տօնին մեծահանդէս ժողովով Ս. Միւռոն օրհնել և Հայաստանի բոլոր կողմերն ուղարկել, կանոն դնելով, որ այնունետեւ ձրիաբար բաշխուի ամենուրեք Ս. Միւռոնը, հակառակ երկի կիլիկիայում այս նկատմամբ մուտք գործած զեղծումների։

Թէպէս Աթոռի փոխարրութիւնից Ս. էջմիածինը շատ դառն և տազնապակից ժամանակներ անցկացրեց՝ արտաքուստ շարումակ ծանր բնութեան, ճնշումների և կեղծքումների ենթակայ, ներքուստ խեղճ, անշուշ և մշտակարօս վիճակի մէջ, ունայն տենչերով միմիանց ձեռքից իշխանութիւն խլոր և յաճախ մէկը միւսից տեղի տակիկար աթոռակալների խաղալիք, և մօտ երկու դար տեղեց այդ թշուառ շրջանը. տակայն աշխարհի ամէն կողմերը ցրուած և շատ տեղեր Մայր Աթոռից աւելի ողորմելի դրամեան մէջ զանուող Հայ ժողովուրդի համար այնքան միխթարական էր մտածել, որ իւր հոգեւոր կեանքի մի կենտրոն ունի մայրենի հոգի վերաց՝ նոյն տեղում, ուր Ս. Կռասաւորիչ իւր առաքելական քարոզութեան և հայքաբնական իշխանութեան հիմքը հաստատեց. այնքան ամուր էր հաւատը, թէ առաջածեալ պատրոյզը պիտի չշնչանէր և ջախջախեալ զաւագանը պիտի չխորտակուէր, — մինչ Ընդհանրական Հայրապետի բարոյական հեղինակութիւնը զնալով աւելի ու աւելի զօրացաւ և Ս. էջմիածնի անունը նուրիրական դաժան ամբողջ հայութեան համաց Մանաւանդ Ժէ. և ԺԼ. դարերում, Մովսէս Տաթեացի վերանորոգիչ հայրապետաց սկսած, երբ Մայր Աթոռն իրօք նորոգուեց, շնչացաւ, կենդանացաւ, պայծառացաւ, դարձաւ լուսոյ և բարոյական վերածնութեան մայր հաւատարիմ հօտի համար. երբ մի շարք նոյակապ անձնաւորութիւններ յաջորդաբար Հայրապետական Աթոռի վերայ բազմելով՝ միմեանց զերազանցել էին ձգուու իրենց շինարարութեամբ և Աթոռի ներքին բարեկարգութեամբ. երբ նոցա ուղարկած նուիրակները հասնում էին Սպահան, Հնդկաստան, Ղրիմ, Պոլսա, Լեհաստան, Իտալիա և Հունադիա, այդ տեղերում պատմական դժբախտ պատահարների բնքմանքով

<sup>1</sup> Խաչն Ցիւսասկառան, երես 64.

հաստատուած և նիւթական բարօրութեան հասած հայ զաղութներին՝ հայրադատական ողջոյն, էջմիածնական սրբութիւնների օրնութիւնը, Ս. Միւռոն տանում, հայրենի աւերակների և նոցա շուրջը գեռ բռնութեան ներքոյ հեծող ժողովրդեան արեան արցունքի պատմութիւնը, մայրենի հող ու ջրի կարօտը տանում, և բերում հետն առատ նիւթական ճոխութիւններ, քաղաքակիրթ աշխարհի նորութիւններ՝ նոր զաղափարներ և ձգտումներ, Ս. էջմիածնի ու հայրապետութեան վարկը իւր բարձրութեան զաղաթնակէտին հասաւ, և նոքա դարձան ամէնքի համար զիտակցաբար սիրելի և պաշտելի մեծութիւններ։ Ս. Միւռոնն ևս, իրրե նոցանից ընդունած ամենաթանկագին նուէրը, նոցա հետ ունեցած հոգեկոր կապի ամենախորհրդաւոր միջնորդը՝ նոյնչափ աւելի յարդի ու նուիրական։

Իրրե նուիրակ և իրրե հայրապետ (1773–1780 թ.), մեր Եկեղեցւոյ պատմութեան այս նշանաւոր շրջանի մի ամենաբդիւնաշատ ներկայացուցին է յուերժ յիշտատակաց արժանի Սիմէռն Երևանցին, և շատ քիչերն են եղել նորանից առաջ և նորանից յետոյ, որ Ս. էջմիածնի բարոյական մեծութեան, հայրապետական իշխանութեան վեհութեան և Ս. Միւռոնի սրբութեան մասին այնպիսի բարձր զաղափար աւնենային, ինչպէս նա, որի գեռ վարդապետութեան օրերից շատ ձեռապէր օրին սկներով մնացած քարոզների մէջ գտնում ենք տաղանդաւոր և խիստ ողերեալ արտայայտութիւնն այն զիտակցութեան։ Այդ քարոզներից մէկում, խօսելով Ս. Գրիգոր Լուսաւորչի մասին՝ նա ասում է. «Այս ամենազովելի անձը այնքան առաջ զնաց իւր անօրինակ ճգնութիւններով և անմարմնական վարքով, և այնպէս սիրելի ու հաճելի եղաւ ամենազթած Աստուծուն, որ մի անզամ ընդհանուրի գրկութեան համար եկած Աստուծոյ Բանին իւր սիրովն ու աղօթքով կրկին անդամ իջեցրեց այս Այրարատեան երկրում, Վաղարշապատի դաշտում, Հայոց բնիկ օթևանում՝ յատկապէս Հայոց ազգի համար . . . Եւ այսաեղից կենդանաբար ջուր և մշտահոս աղբիւր բղիսեց, այսինքն Ս. Հոգևոյ բազմապարզ շնորհը, որ աստուծածազործ Միւռոնի միջնոցաւ բաշխւում է բոլոր Եկեղեցիներին, և հաւատացեալների հոգիները նորանով ոռոգուած՝ պարարտանում ու պտուղ են տալիս»։

— Միւռիշ տեղ Ս. Միւռոնի մասին աւելացնում է. «Բահանայապետական բոլոր սրբազրծութիւնները Միւռոնով են կատարում ընդունում։ Ինչպէս Եկեղեցի, սեղան, խաչ, քանաքան առաջ և ուրիշ Եկեղեցական ամէն ինչ Միւռոնով է օծում և սրբում։ այդ պատճառով և Եկեղեցական բոլոր խորհուրդների մէջ մկրտութիւնը և Միւռոնի օծումը գերադաս են, իրրե մնացած բոլորի գուռ և ճանապարհ»։

«Յատկապէս Միւռոնորհնութեան հանդիսի առթիւ Ս. էջմիածնի դիմող ուխտաւոր բազմութիւնն աշքի առաջ ունենալով նա բացականչում է. «Ա՛վ ամենայն Եկեղեցիք և Եկեղեցականներ, ճանաշեցէք թագուհիների միակ թագուհի Ս. էջմիածննը, որ Հայոց ազգի Աթոռն է և Թիստոսի յատուկ սիրելին։ որի նմանը ուրիշ ազգեր չունին, որին Երանի են տալիս և զովում, որին կարօտում են և տեսնել ցանկանում . . . Տիսէք և ճանաչեցէք իենդանի ջրոյ միակ աղբիւր և ջրհոր Ս. էջմիածնը, որ ահա բաշխում է ձեզ, յուսոգումն

հոգեսոր, կենդանաբար ջուրը՝ Սուրբ Միւռոնը։ Այն խորհրդաւոր արեգակն է և կշմիածինը, որ առաստավէս ճառագայթում է դէպի ձեզ աստուածային լոյսը։ Սուրբ Միւռոնը, որ ձեր հոգին ու մարմինը սլիտի լուսաւորէ։ Վայեկցէ՞ ք ուրեմն, չնորհակա՞լ եղէք և իմացէ՞ք, թէ ունից էք ստանում այդ չնորհը։ Դժբախտաբար նոյն վստահութեամբ և նոյն պարծանքով խօսել մենք այսօր այլևս չենք կարող։ Սիմէնս Երեանցու օրով այնքան մեծ էր իրօք Մայր Աթոռի կատարած կենդանաբար և լուսատու դերը հայ ժողովրդեան վերաբերմամբ։ Խնքը, բազմերախտ հայրապետը, մանուկ հասակից սնուած և կրթուած լինելով նոյն Աթոռի հովանու ներքոյ, ամբողջ կեանքը նորա չենութեանն ու պայծառութեանը նուիրած՝ այնպիսի ջերմ հաւատ ունի դէպի նորա երկնատուը կոչումը, և Մահմետական ազգերով շրջապատուած, Ասիական թանձր խաւարի մէջ կորած մի մթնոլորտում այնքան զզալի էր Քրիստոնէի համար նորա հոգերը գերազանցութիւնը, որ վերև բերուած խօսքերը պէտք է համարուին հեղինակի անկեղծ զզացման և համոզման արտայայտութիւններ։ Սակայն դարուկէս ժամանակ է անցել այն օրից և մեզ բերել շատ ծանր փորձեր, մեզ համեստ ու նկուն դարձնող բազմադիմի ծանօթութիւններ։ Մեր առջև մի ընդարձակ քաղաքակիրթ քրիստոնեայ աշխարհ կայ՝ կենդանութեան և լուսաւորութեան այնպիսի փառաշուր կենտրոններով, որ եթէ մենք վստահանանայինք իսկ նոցա հանդէվ բերել մեր հոգեսոր կեանքի կենտրոնը և պարծենալ սորտ պատկառելի հուռթեամբ, աստուածահիմն հաստատութեամբ և անցեալ փառքով, սառը պատասխան կը ստանայինք անշուշտ։ իսկ գո՞ւք, նոր ժամանակի սերունդներդ, որչա՞փ արժանաւոր ժառանգներ էք արդեօք ձեզ աւանդած բարեաց, ինչպէ՞ս էք գնահատում և ի՞նչ միջոցներով ներզործական դարձնում նոցա հոգենոր ոյթը։ ինչքա՞ն պայծառ էք պահում արտաքուստ և կենդանի՝ ներքուստ ձեր հայրենի տունը։ Եւ ափիբերան պիտի մնայինք մենք։ Եւ թողնելով որ իւրաքանչիւր քրիստոնեայ ժողովուրդ իւր ազգային սրբութիւններին զերազոյն արժանիք վերազրէ և պատշաճաւոր յարզն ընծայէ նոցա, դառնայինք և մեր փառապանծ ժառանգութեան բազդատմամբ մեր անպարտաճանաչ խեղճութիւնը սպայինք։ Բայց և նոր ողի ու եռանդ ստանայինք, հակառակ մեր ապաշնորհութեան՝ Միեւ Լուսաւորչի և մեր երջանիկ նախնեաց անդուր աղօթքի և անսպառ երախտեաց չնորհիւ դեռ կանգուն և միշտ հաստատ տեխնելով Մայր Աթոռը, նորով օրհնուութեամբ Սրբալոյս Միւռոնի միշտ կենդանի և կենդանաբար չնորհացին Ս. Հողին քրիստոնեայ հայութեան մէջ։ Ճայնէինք միմեանց, և դարէ ի դար հնչող այս ձայնը արձագանգ տայ հայ սրտերում։ Եկէ՞ք, եղրա՛րք, չէ՞ն ու վառ պահենք լուսոյ այս սուրբ խորանը, որ այստեղից ծագէ միշտ լոյս մեր հայաստան աշխարհին։

ԿԱՐԱԳԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Վերջ՝ 2)